Սիփան Ծիրազ

Զգեստներ տիկնիկների համար և կամ զգեստներ զգեստների համար

Օրը նստել է գորշ ամպի վրա; Օրվա մեջ
տիկնիկներ են քայլում: Օրվա մեջ օրեր են
քայլում: Օրերի մեջ օրեր են քայլում: Տարիների
մեջ օրեր են քայլում, ժամեր են քայլում,
ժամանակներ;
Ժամանակի մեջ անուրջներ են փայլում, անուրջներ են
քայլում, խամաճիկներ: Օրերը
անցնում են, անցնում են, անցնում են: Օրվա մեջ օրեր են
մեռնում, օրեր:
Օրվա մեջ զգեստներ են քայլում, օրվա մեջ՝
հոգնած տիկնիկներ: Զառանցում են հոգնած
տիկնիկները, տիկնիկները՝ հոգնած տիկնիկներ:
Ես հոգնե՛լ եմ, հոգնե՛լ.եմ , հոգնե՛լ եմ. ուզում եմ նստել ամպի վրա, ուզում եմ
պառկել միայնության վրա,
,ուզում եմ ննջել անհայտության մեջ,
ուր զգեստներ են կարում տիկնիկների համար,
ԶՈՒՐ զգեստներ են կարում տիկնիկների համր: